

## Կարծիք

Հայցորդ Արա Ազատյանի «Հայաստանի խորհրդայնացման հիմնահարցը հայ պատմագրության մեջ» Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն»  
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության մասին

Ժամանակային առումով խորհրդանշական է, որ հայցորդ Արա Ազատյանը պատմագիտական քննության նյութ է դարձրել մի հիմնահարց, որը տեղի է ունեցել ուղիղ 100 տարի առաջ: Խոսքը Հայաստանի խորհրդայնացման հիմնահարցի մասին է, մի խնդիր, որին մեկ դար շարունակ մեր պատմագիտական և հուշագրական հարուստ գրականության մեջ, կապված գաղափարական, քաղաքական ու տնտեսական համակարգերի փոփոխությունների, զանազան վայրիվերումների հետ, հասկանալի պատճառներով տրվել են ամենատարբեր մեկնաբանություններ ու գնահատականներ: Իսկ մենք գիտենք, որ պատմությունն ու պատմագիտությունը հումանիտար ոլորտ է և այն կամ թե ակամա կոչված է եղել սպասարկելու տվյալ ժամանակաշրջանի իշխող պետական, գաղափարական-քաղաքական համակարգերի շահերն ու պահանջմունքները:

Մասնավորապես խորհրդային 70 տարիներին Հայաստանի խորհրդայնացման և առհասարակ Հայոց պատմության բազում հարցերի շուրջ ստեղծվել է հարուստ գրականություն: Սակայն դրանց բովանդակության ու հատկապես գաղափարական ուղղվածությանը պետք է հիմնականում ըմբռնումով մոտենալ, քանզի, եթե անգամ մերօրյա պատմաբանը լիներ խորհրդային ժամանակաշրջանում դարձյալ կուսակցական և իշխող գաղափարախոսության հայեցակարգերով ու մեթոդաբանությամբ, ավել կամ պակաս չափով, պարտադիրված կլիներ գրել գրեթե նույն կերպ, եթե, մեղմ ասած, չէր ուզենա ենթարկվել հետապնդման ու հալածանքի:

Ինչ վերաբերում է Սփյուռքի հայ պատմագիր-հուշագիր հեղինակներին, ապա նրանց մոտ էլ ավելի հաճախ իշխել է ոչ միայն և ոչ այնքան զուտ գիտությանը, ճշմարտությանը ծառայելու պահանջը, գիտական անաշառությունն ու բարեխղճությունը, որքան կուսակցական, հատվածական, սուբյեկտիվ մոտեցումն ու նախասիրությունները:

Ուզում եմ նաև մեր ունկնդրին հիշեցնել, որ իսկական ու անաշառ պատմաբանի սպատակը պետք է լինի պատմական այս կամ այն երևույթի, գործընթացի, իրադարձության կամ դրվագի համակողմանի ու ստույգ ախտորոշումը (դիագնոզ) այնպես, ինչպես արհեստավարժ բժիշկն է վարդում իր հիվանդի հետ և ճիշտ ախտորոշման արդյունքում էլ բուժում է իր հիվանդին:

Այժմ փիլիսոփայական նման զեղումներից և գիտամեթոդական մի քանի դիտարկումներից հետո փորձենք կանգ առնել մեր գրախոսության բուն նյութին՝ պաշտպանության ներկայացված ատենախոսության գիտական արժենորմանը: Հենց սկզբից արձանագրենք, որ արդիականության տեսակետից տեղին և դիպուկ է ընտրված ատենախոսության թեման, որը գալիս է, ինչպես արդեն ասվեց, 100-ամյա հեռվից՝ քննելու և արժենորելու հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող՝ Հայաստանի խորհրդայնացման հիմնահարցի շուրջ ստեղծված գրականության պատմագիտական արժեքն ու նշանակությունը:

Ատենախոսը ճիշտ է նկատում, որ այս հիմնահարցը ՀՅԴ-Բոլշևիկ գաղափարա-քաղաքական անհաշտ պայքարի ընթացքում միշտ քաղաքականացվել է, ուստի և տրվել են հակասական գնահատականներ (տե՛ս էջ 3):

Դրվատանքի է արժանի ատենախոսի մեթոդական մոտեցումը հարցերի պատմագիտական քննությունն ու գնահատականը ներկայացնելիս, նա նախ ներկայացնում է տվյալ հարցի հակիրճ պատմությունը, այնուհետև դրա շուրջ պատմագիր և հուշագիր հեղինակների մեկնաբանություններն ու գնահատականները, իսկ դրանից հետո լրացուցիչ սկզբնադրյունների ու փաստական այլ հարուստ նյութերի շրջանառման միջոցով մեկնաբանում, հիմնավորում, արժենորում ու գնահատում է, իր կարծիքով, այս կամ այն հեղինակի ընդունելի կամ վիճելի, ճիշտ կամ սխալ տեսակետը: Եվ ընդունելի այս մոտեցմամբ է շարադրված ամբողջ ատենախոսությունը: Կարծում ենք, որ այս մոտեցումը մեթոդական ուղեցույց կարող է հանդիսանալ նմանատիպ պատմագիտական բնույթի թեմաներով գրադարձակ սկսնակ ուսումնասիրողների համար:

Միանգամայն իրավացի է Ազատյանը, երբ Հայաստանի խորհրդայնացման հիմնահարցի շուրջ ստեղծված պատմագիտական գրականության վերլուծությունը ներկայացնելիս պատմաբաններին բաժանել է երեք մեծ խմբի՝ խորհրդային, Սփյուռքի և հետխորհրդային կամ անկախության շրջանի: Ինքնին հասկանալի է, որ այդ երեք պատմաշրջաններից ծավալային առումով ամենամեծ տեղը հատկացվել է խորհրդային 70 տարիներին ստեղծված գրականության քննությանն ու վերլուծությանը: Դրվատանքի է արժանի նաև այն, որ հեղինակը խորհրդային ժամանակաշրջանն էլ իր հերթին բաժանել է երեք շրջափուլերի՝ հաշվի առնելով տվյալ շրջանի առանձնահատկությունները, որոնք իրենց դրոշմն են թողել պատմաբաղարական շատ հարցերի լուսաբանման վրա:

Հայցորդ Ազատյանի բնորոշումները շատ տեղին, դիպուկ ու հիմնավոր են խորհրդային պատմագրության հեղինակների կանխակալ մոտեցումները, քաղաքական դիրքորոշումները և կուսակցական, գաղափարական հանձնառությունները անթերի կատարելու վերաբերյալ՝ դրանց հասնելու համար զանց առնելով իրական փաստերը, դրանք կեղծելով կամ զլսիվայր շուրջ տալով: Օրինակ, պատմաբան Ս. Կարապետյանը 1920 թ. ամռան մոսկովյան հայ-ռուսական բանակցությունների ձախողման մեղքը միակողմանիորեն բարդում է Լ. Շանթի պատվիրակության վրա, թե, իբր, Խորհրդային Ռուսաստանը պատրաստ էր բավարարել Վանի, Էրզրումի, Տրապիզոնի միացումը Հայաստանին՝ դրա կողքին մոռացության մատնելով, որ այդ բանակցությունների ընդհատման պատճառը եղել է Բեքիր Սամի բեյի ժամանումը Մոսկվա (էջ 42-43), բացի այդ հայ և աղբբեջանցի բոլշևիկների հակահայ կեցվածքն ու հայավնաս հեռագրերը Մոսկվա: Նույն կերպ, մեր կարծիքով, փաստարկված, հիմնավոր ու սպառիչ են Արա Ազատյանի տված պատասխանները մեկ դար շարունակ բանավեճի նյութ դարձած բոլշևիկների մայիսյան ապստամբության թեմային:

Ատենախոսը ճիշտ է նկատում, որ խորհրդահայ պատմաբանները գրեթե միաձայն ուղղակի շրջանցել են խորհրդա-քեմալական մերձեցման ու դաշինքի հանգամանքը և Հայաստանի ու հայ ժողովրդի զլսին եկած ձախողումների ու աղետի մեղքը միակողմանիորեն ու ամբողջապես բարդել են միայն ՀՅԴ կուսակցության վրա (էջ 43-45):

Ատենախոսը ի հայտ է բերել նաև հակասությունը հոկտեմբերի 14-ի ՈԿ(Բ)Կ ԿԿ-ի Քաղյուրոյի որոշման՝ Հայաստանի խորհրդայնացման հարցը օրակարգ բերելու և հոկտեմբերի 28-ի նախաստորագրած Լեզրան-Շանթ համաձայնագրի միջև (էջ 66): Եվ քանի որ համաձայնագրում Հայաստանի խորհրդայնացման հարց չէր շոշափված, ու բացի այդ՝ Լեզրանը էլի մի քանի հայանպաստ խոստումներ էր տվել, դրա համար էլ նոյեմբերի 4-ի Կովբյուրոյի Բարձի համատեղ նիստում հայ-ռուսական պայմանագրի նախագիծը մերժվում է:

Տեղին, հիմնավոր ու դիպուկ քննադատում է խորհրդային պատմաբաններ Ս. Կարապետյանի, Ե. Սարգսյանի, Մ. Արզումանյանի և մյուսների գլխիվայր շրջած փաստարկ մեկնաբանությունները թուրք-հայկական պատերազմի առնչությամբ՝ ցույց տալով, որ Թուրքիան Խորհրդային Ռուսաստանի թողտվությամբ է հարձակվել Հայաստանի վրա, և այն չէ, որ Կարմիր բանակը եկավ ու փրկեց հայ ժողովրդին (էջ 68-70): Սա 100-ամյա հեռվից մեզ խորհելու նյութ է տալիս նաև մեր ժամանակների համար:

Ատենախոսության 2-րդ գլխի վերաբերյալ արձանագրենք, որ այն շարադրված է նույն կերպ՝ քննական ու քննադատական ոգով ու ոճով: Ատենախոսը ճիշտ է նկատում, որ անզամ Անկախության շրջանի պատմագրության մեջ միասնական կարծիք (տեսակետ) չկա Հայաստանի խորհրդայնացման հիմնահարցի, նույնիսկ դրա ստույգ օրվա վերաբերյալ: Վերջին 30 տարում կոմունիստական կապանքներից ազատականացած անկախ Հայաստանում ով ինչպես ցանկանար, կարող էր գրել ու հրատարակել, մի քան, որ արգելված էր կոմունիստական ամբողջատիրության շրջանում: Եվ ահա ատենախոսը իրավացիորեն նշում է կոմունիստական «երանելի» ժամանակների թերևս վերջին մոհիկանի՝ Վլ. Պետրոսյանի գրքերը, որոնցում տակավին շարունակվում են 1920-ական թվականների պատմագրության «ավանդները»՝ Հայաստանի խորհրդայնացման պատմության վերաբերյալ (էջ 124): Տեղին է նաև ատենախոսի դիտողությունը մեր ժամանակների մի խումբ պատմաբանների հասցեին, ովքեր սխալմամբ գտնում են, թե Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանին թողնվում էր ընդամենը 10 հազար քառ. կմ տարածք (էջ 138), և այլն, և այլն:

Այս ամենի կողքին, բնականաբար, հարկ ենք համարում արտահայտել նաև նկատված մի քանի դիտողություններ, նկատառումներ ու ցանկություններ.

1. Կուզենայի, որ ատենախոսը սպառիչ պատասխան տար այն հարցին, որ եթե (իհարկե հասարակական գիտությունը «եթե» չի սիրում) 1920 թ. մայիսին Հայաստանը խորհրդայնանար, կունենար արդյո՞ք տարածքային կորուստ, գոնե կպահպանվեր արդյոք ՀՀ 1920 թ. մայիսի առկա տարածքը, որ կազմում էր ներկայիս Հայաստանի մոտ կրկնակին: Ատենախոսը, բարեխսդորեն հղումներ անելով Սփյուռքի և հայաստանյան մի խումբ հեղինակներից, փորձել է պատասխանել քանավիճային այդ հարցին, որ մայիսին Հայաստանի խորհրդայնացման պարագայում «շատ հնարավոր է, որ Հայաստանն այսօր իր սահմաններում ունենար նաև Կարսի մարզը, Սուրմալուի գավառը» (էջ 27): Անձամբ մեր կարծիքն այդ հարցում բացասական է:

2. Ատենախոսը թվարկել է իր առջև դրված 8 խնդիր և փորձել է տալ դրանց շուրջ ստեղծված պատմագիտական գրականության գիտավերլուծական գնահատականը: Կարծում ենք անհրաժեշտ էր առանձին հարցով, նույնիսկ առանձին գլխով հատուկ անդրադառնալ թուրք-հայկական պատերազմի պատմագիտական քննությանը, քանզի աղետաբեր այդ պատերազմը եղավ Հայաստանի խորհրդայնացման գլխավոր առանցքը: Հայտնի է, որ Հայաստանի խորհրդայնացման գործընթացը մեծապես կապված է եղել այդ շրջանում բոլշևիկ-Քեմալ դաշնակցային հարաբերությունների հետ: Գիտենք, թե ինչպես քեմալականները նպաստեցին, որ Ադրբեջանը խաղաղ խորհրդայնանա, իսկ դրա դիմաց էլ նրանք ստացան գործողությունների ազատություն ՀՀ-ի դեմ, «Ազգային ուխտ»-ով Հայաստանի տարածքները բգկտելու, իրար միջև բաժանելու, իսկ Ռուսաստանին հասանելիք հատվածը՝ խորհրդայնացնելու:

3. Հարկ էր նկատել տալ, որ, օրինակ, եթե 1920-30-ական թթ. Մայիսյան ապստամբության կամ որևէ իրադարձության շուրջ խորհրդային կուսակցական-պետական գործիչների միջև տեսակետերի, մոտեցումների, կարծիքների տարակարծություններ են եղել, ապա դրանք ոչ այնքան գիտական բնույթ են կրել, որքան ներկուսակցական,

անձնական հաշիվներ մաքրելու նպատակ: Օրինակ, Վանանդեցի-Դուրզարյան գույզի վեճը Աշ. Հովհաննիսյան-Ամիրխանյանի միջև (էջ 20-21):

4. Եթք ատենախոսը քննում և արժենորում է խորհրդային հեղինակների աշխատությունները, օրինակ, Մայիսյան ապստամբության հարցի շուրջ և եթք խոսվում է դրա համար ստեղծված նախադրյալների, ապստամբության շարժիչ ուժերի մասին, ապա ավելորդ է շեշտել բանվորների՝ որպես շարժիչ ուժ լինելու հանգամանքը, քանզի բանվոր դասակարգ որպես այդպիսին Հայաստանում չի եղել, Մայիսյան ապստամբության շարժիչ ուժ են համարվել Ալեքսանդրապոլի, Կարսի, Սարիղամիշի, Վարդենիսի և այլ բանակային զորամասերը, որոնք վարակվել էին բոլշևիկների հեղափոխական բացիլներով, իսկ 1920 թ. աշնանը պարտվեցին թուրք-հայկական պատերազմում:

5. Գաղտնիք չեմ բացում. Ղարաբաղի խորհրդայնացման հարցում տվյալներ կան, որ տեղի բոլշևիկները, և ոչ միայն նրանք, Դրոյին հասկացրել են, որ իր զորամասով թռղնի և հեռանա, բացի այդ հայտնի է ոռուսասեր Դրոյի խոստովանությունը, որ՝ ինքն իր կյանքում ոուս զինվորի վրա զնդակ արձակած չկա:

6. Մեր կարծիքով, ատենախոսության գիտական արժեքը և պատմության փորձի ու դասերի առումով նշանակությունն ավելի կմեծանար, եթե ատենախոսը 1920 թ. դարակազմիկ ու ճակատագրական նշանակության հարցերի պատմագիտական քննությունը պատմական զուգահեռների ձևով անցկացներ նաև մերօրյա իրողությունների ու իրադարձությունների լույսի տակ: Օրինակ, հայ-ռուսական ամառային և աշնանային անպտուղ բանակցությունները, ոռուս-թուրքական օգոստոսի 24-ի նախաստորագրված բարեկամության պայմանագրի հանգամանքը, վերջինիս գրեթե անդրադարձ չկա և այլն:

7. 1920 թ. դեկտեմբերին հենց Լեզրանի հրահանգով Օհանջանյանի կաբինետի անդամներին Բզովդալ գյուղում ձերբակալելու հանգամանքը ամենից առաջ պետք էր բացատրել Մայիսյան ապստամբության ճնշման ընթացքում Բյուրո-կառավարության ցուցաբերած դաժանությամբ, մի բանիսի մահապատիժներով (էջ 154-155):

8. Եզրահանգման կետերից մեկում, եթք ասկում է, թե արտաքին ուժերի միջամտության արդյունքում Հայաստանը խորհրդայնացվեց, բայց մյուս կողմից կար նաև մեկ այլ արտաքին

ուժ՝ Անտանտը, հանձին Անգլիայի, որը ջանում էր, որ Հայաստանը չխորհրդայնացվի (էջ 173) և այլն:

Մեր կողմից արձանագրված այս և մի քանի այլ նկատառում-ցանկություններ արտահայտում ենք նաև նրա համար, որ հեղինակը, դրանք հաշվի առնելով, կարող է աշխատությունը նախապատրաստել զրբի ձևով հրատարակության, որը միանգամայն արժանի է: Վերջում նշենք, որ ատենախոսության հիմնական դրույթները տեղ են գտել սեղմագրում և համապատասխանում են նրա բովանդակությանը:

Այսպիսով՝ հանրագումարի բերելով վերոշարադրյալը՝ կարելի է արձանագրել, որ ընտրված թեման գիտական է ու արդիական, քանզի Հայաստանի խորհրդայնացման հիմնահարցը մեկ դար շարունակ հայ պատմագրության մեջ տարակարծությունների տեղիք է տվել: Ատենախոսին հաջողվել է պատմաքննական, վերլուծական մոտեցմամբ, լրացուցիչ թարմ փաստավավերագիր նյութերի շրջանառմամբ, ըստ շրջափուլերի, հիմնավոր ու համոզիչ պատասխաններ տալ հայ պատմագրության մեջ մինչ օրս շրջանառվող տարակարծություններին՝ դրանք խմբավորել, համակարգել, քննադատել, վերլուծել, գնահատել ու արժնորել:

Գնահատելին նաև այն է, որ, չնայած ատենախոսի երիտասարդ տարիքին, ընտրել է պատմության պատմագրության տիպի ծանր թեմա և, մեր կարծիքով, հաջողությամբ լուծել է իր առջև դրված խնդիրը: Ավելին, սույն աշխատանքը կարող է մեթոդական ուղեցույց հանդիսանալ պատմագրության թեմաներով զբաղվող սկսնակ ուսումնասիրողների համար:

Այս ամենից զատ՝ աշխատանքը գրված է գիտական բարեխողճությամբ, եթե պատմագիր հեղինակներին քննադատել է, ապա դա կատարել է գիտական տակտով ու բարեխողճությամբ, շարադրանքը գրագետ է, մաքուր հայերենով, կառուցվածքը՝ կուռ: Ուստի հիմք ընդունելով վերն ասվածը՝ գտնում եմ, որ հրապարակային պաշտպանության դրված սույն ատենախոսությունը լիովին համապատասխանում է ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակ Արա Ազատյանն արժանի է իր հայցած պ. գ. թեկնածուի գիտական աստիճանի:

Պաշտոնական ընդիմախոս՝

*Մ. Հովհաննես*

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի


առաջատար գիտաշխատող պ. գ. դ., պրոֆեսոր Ա. Ս. Հակոբյան

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող պ. գ. դ., պրոֆեսոր Ա. Ս.

Հակոբյանի ստորագրությունը հաստատում էն՝

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական քարտուղար՝ պ. գ. դ., դոցենտ Հ. Ղ.

Մուրադյան



*3.11.2020թ*